ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/5Ծ»

«25» 12 2020 թ.

ք. Երևան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յասոն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Խուրշուդյանի, որը գործում է «Յասոն» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման

արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1 213 440 (մեկ միլիոն երկու հարյուր տասներեք հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**[18]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«ՅԱՍՈՆ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ձորաղբյուր, Սևանի 4
ՀՀ կենտրոնական գանձապետարան	Արարատբանկ ԲԲԸ
Հ/Հ 900011018513	Հ/Հ 1510002226470100
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 02540338
գլխավոր քարտուղար	տնօրեն Տ. Խուրշուդյան
Հ. Բատիկյան	
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«25» 12 2021թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/5Ծ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
2	79821200/560	Ստորև	դրամ	532 800	1	ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարության 3-րդ շենք	Պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում
3	79821200/561	Ստորև	դրամ	680 640	1	ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարության 3-րդ շենք	Պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում
Ընդամենը				1 213 440			

Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:
Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

***Թվով՝ 500 /հինգ հարյուր/գրանցամատյան.**
****Թվով՝ 8000/ութ հազար թույլտվության ձևաթուղթ, որից 200-ը ՌԴ ոչ կանոնավոր փոխադրումների իրականացման մեկանգամյա թույլտվության փաստաթղթի տպագրություն, ըստ նախարարության կողմից տրված օրինակների, թույլտվությունների տպագրման համամասնությունը ըստ երկրների կարող են ենթարկվել փոփոխության.**

Ծառայության տեխնիկական բնութագիրը

Չափաբաժին 2. Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանսի /ՏՆԵԿ/ թույլտվությունների բեռնափոխադրումների գրանցամատյանի տպագրման ծառայության

Ձեռքբերվող ծառայության նկարագիր
Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանսի /ՏՆԵԿ/ թույլտվությունների բեռնափոխադրումների գրանցամատյանի տպագրության ծառայություն 1. Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանսի /ՏՆԵԿ/ թույլտվությունների բեռնափոխադրումների գրանցամատյանը 210x290 մմ չափերով կանաչ գույնի մատյան է, բաղկացած 50 էջից, որը նախատեսված է տրանսպորտային գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու համար: 2. Գրանցամատյանի կազմի վերին մասը մուգ կանաչ գույնի ստվարաթուղթ է, որը պարունակում է տպագրական եղանակով կատարված հետևյալ տեղեկատվությունը՝ ա) դիմերեսի վերին մասում՝ <<EKMT>>, <<ARM>>, <<Գրանցամատյան N.....>> գրառումները, բ) դիմերեսի կենտրոնում՝ <<ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ>>, <<Բեռների միջազգային փոխադրումների>>, <<ՏՆԵԿ N..... թույլտվություն>> գրառումները և փոխադրողի անվանումը և հասցեն նշելու համար տողեր,

գ) դիմերեսի ստորին մասում՝ <<Կնիքի տեղը>>, <<Ստորագրություն.....>>, <<Տրված է.....>> գրառումները,

դ) դարձերեսին՝ <<ԿԱՐԵՎՈՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ>> վերնագրով տեղեկատվություն՝ հետևյալ բովանդակությամբ.

<<1.Սույն բեռնափոխադրումների գրանցամատյանը (այսուհետև՝ գրանցամատյան) և ՏՆԵԿ համապատասխան թույլտվությունը պետք է գտնվեն տրանսպորտային միջոցում: Յուրաքանչյուր թույլտվության համար պետք է լինի միայն մեկ գրանցամատյան:
2.Գրանցամատյանը պետք է լրացվի յուրաքանչյուր բեռնման և բեռնաթափման կետերի միջև յուրաքանչյուր բեռով երթ սկսելուց առաջ, ինչպես նաև յուրաքանչյուր դատարկ երթից առաջ:
3.Հավաքովի բեռի փոխադրում կատարելիս անհրաժեշտ է նշել միայն լրիվ բեռով երթը և հաշվի չառնել բեռի մասերը բեռնելու և բեռնաթափելու հետ կապված վազքը:
4.Ցանկացած ուղղումն անհրաժեշտ է կատարել այնպես, որպեսզի հնարավոր լինի որոշել սկզբնական բառերն ու թվերը:
5. Լրացված հաշվառման թերթերը պետք է թողնվեն գրանցամատյանում՝ մինչև թույլտվության մեջ նշված գործողության ժամկետի լրանալը: Թերթերի պատճենները լրացնելուց հետո պոկվում են և 20 օրվա ընթացքում փոխանցվում իրավասու մարմնին՝
-տարեկան թույլտվությունների դեպքում՝ յուրաքանչյուր օրացուցային ամիսը վերջանալուց հետո,
-կարճաժամկետ թույլտվությունների դեպքում՝ գործողության ժամկետը վերջացնելուց հետո:>>

6. Գրանցամատյանի էջերը 1-ից մինչև 50 հերթական համարակալմամբ բաց կանաչ գույնի թղթեր են, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է տպագրական եղանակով կատարված հետևյալ տեղեկատվությունը՝

ա)<<ՏՆԵԿ թույլտվություն N...>> գրառումը՝ վերին աջ անկյունում,

բ) յոթ ուղղահայաց սյունակներից կազմված համարակալված աղյուսակ հետևյալ վերնագրերով՝

<< ա) Մեկնման ամսաթիվը բ) ժամանման ամսաթիվը>>,

<< ա) բեռնման կետը բ) բեռնաթափման կետը>>,

<< ա) բեռնման երկիրը բ) բեռնաթափման երկիրը>>,

<<./գրանցման երկիրը>>,

<<Ընդհանուր կշիռ տոննայով (0.1 տ ճշտությամբ)>>,

<<Վազքը (կիլոմետրաժ) մեկնման պահին/ վազքը (կիլոմետրաժ) ժամանման պահին>

<<հատուկ նշումներ>>:

գ) 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ սյունակներում ուղղահայաց նշվում ա)բ) գրառում:

դ) Գրանցամատյանի էջերին տեղեկատվությունը տպագրվում է թղթի լայնքով:

Գրանցամատյանի կազմի դիմերեսի, դարձերեսի

տեղեկատվության տեղադրման բաշխումը կցվում է

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելու հաջորդ օրը	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացույցային օր հետո

Կազմի դարձերես՝

ԿԱՐԵՎՈՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Սույն բեռնափոխադրումների գրանցամատյանը (այսուհետև՝ գրանցամատյան) և ՏՆԵԿ համապատասխան թույլտվությունը պետք է գտնվեն տրանսպորտային միջոցում: Յուրաքանչյուր թույլտվության համար պետք է լինի միայն մեկ գրանցամատյան:

2. Գրանցամատյանը պետք է լրացվի յուրաքանչյուր բեռնման և բեռնաթափման կետերի միջև յուրաքանչյուր բեռով երթ սկսելուց առաջ, ինչպես նաև յուրաքանչյուր դատարկ երթից առաջ:

3. Հավաքովի բեռի փոխադրում կատարելիս անհրաժեշտ է նշել միայն լրիվ բեռով երթը և հաշվի չառնել բեռի մասերը բեռնելու և բեռնաթափելու *հետ կապված վազքը*.

4. Ցանկացած ուղղումն անհրաժեշտ է կատարել այնպես, որպեսզի հնարավոր լինի որոշել սկզբնական բառերն ու թվերը:

5. Լրացված հաշվառման թերթերը պետք է թողնվեն գրանցամատյանում՝ մինչև թույլտվության մեջ նշված գործողության ժամկետի լրանալը: Թերթերի պատճենները լրացնելուց հետո պոկվում են և 20 օրվա ընթացքում փոխանցվում իրավասու մարմնին՝

-տարեկան թույլտվությունների դեպքում՝ յուրաքանչյուր օրացուցային ամիսը վերջանալուց հետո,
-կարճաժամկետ թույլտվությունների դեպքում՝ գործողության ժամկետը վերջացնելուց հետո:

Զափաբաժին 3. Հայաստանի Հանրապետության միջպետական բեռնափոխադրումների մեկանգամյա թույլտվության փաստաթղթի /բլանկի/ տպագրման ծառայությունների

Ձեռքբերվող ծառայության նկարագիր
Հայաստանի Հանրապետության միջպետական բեռնափոխադրումների մեկանգամյա թույլտվության փաստաթղթի /բլանկի/ տպագրման ծառայության **1.** Միջպետական բեռնափոխադրումների մեկանգամյա թույլտվության բլանկը 270x190 մմ չափերով,պաշտպանված շերտով փաստաթուղթ է: **2.** Միջպետական բեռնափոխադրումների մեկանգամյա թույլտվության բլանկի գույնը յուրաքանչյուր երկիր համար սահմանվում է համապատասխանաբար: **3.** Միջպետական բեռնափոխադրումների մեկանգամյա թույլտվության բլանկը դիմային կողմը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝ ա. Տպագրական եղանակով կատարված տեքստերը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», «ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ավտոմոբիլային տրանսպորտով միջազգային փոխադրման» /երեք լեզվով՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն/,

Կազմի դիմերես՝

ECMT

ARM

Գրանցամատյանի N----------

ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Բեռների միջազգային փոխադրումների համար

ՏՆԵԿ N ----------թույլտվություն

Փոխադրող՝----------

(Անվանումը)

(Տան հասցեն կամ կազմակերպության հասցեն)

Կնիքի տեղը

Ստորագրություն----------

Տրված է----------

(Տրման տեղը և ամսաթիվը)

Միջպետական բեռնափոխադրումների մեկանգամյա թույլտվության բլանկի հերթական համարը նշող հնգանիշ թիվ:

գ. Հայաստանի Հանրապետության զինանշանի ուրվանկարը:

4. տպագրական եղանակով կատարված հետևյալ գրառումները՝ Միջպետական բեռնափոխադրումների մեկանգամյա թույլտվության բլանկի հերթական համարը նշող հնգանիշ թիվը, «Փոխադրողների քանակը», «Ուժի մեջ է», «Փոխադրում», «Մուտք», «Ելք», «3-րդ երկրից», «Հայաստանի Հանրապետության և», «Փոխադրողի անվանումը և լրիվ հասցեն», «Լրացուցիչ տեղեկություններ», «Բեռնատար, քարշակ», «Կցորդ, կիսակցորդ», «Մակնիշը, պետ. համարանիշը», «Բեռնատարողություն» «Փոխադրող բեռի քաշը» «Բարձման վայրը» «Բեռնաթափման վայրը» «Թույլտվություն տվող մարմնի անվանումը, տրման ժամկետը, ստորագրությունը և կնիքը» » /երեք լեզվով՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն/:

5. Միջպետական բեռնափոխադրումների մեկանգամյա թույլտվության բլանկի վրա տպագրական եղանակով կատարված տեքստերի ու տվյալների գրառումները պետք է լինեն սև գույնի:

6. Միջպետական բեռնափոխադրումների մեկանգամյա թույլտվության բլանկի վրա կենտրոնում տպագրական եղանակով դրոշմված ՀՀ զինանշան՝ արծաթագույն:

Դեպի ՌԴ ոչ կանոնավոր փոխադրումների իրականացման մեկանգամյա թույլտվության փաստաթղթի /բլանկի/ տպագրական ծառայության աշխատանքների

1. Դեպի ՌԴ ոչ կանոնավոր փոխադրումների իրականացման մեկանգամյա թույլտվություն բլանկը 270x190 մմ չափերով,պաշտպանված շերտով գունավոր փաստաթուղթ է:

2. Դեպի ՌԴ ոչ կանոնավոր փոխադրումների իրականացման մեկանգամյա թույլտվություն բլանկի դիմային կողմի վերին մասում տպագրական եղանակով դրոշմված ՀՀ զինանշան/ գունավոր/:

3.Դեպի ՌԴ որ կանոնավոր փոխադրումների իրականացման մեկանգամյա թույլտվություն բլանկի դիմային կողմը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը տպագրական եղանակով կատարված տեքստերը՝

3.1 Դիմերեսին՝ վերին մասում երկու լեզվով՝ /հայերեն, ռուսերեն/ տպագրական եղանակով կատարվում է հետևյալ գրառումները՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», «ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N 0000» «այլ պետության փոխադրողին, տվյալ տրանսպորտային միջոցով Հայաստանի Հանրապետության տարածք միջազգային ոչ կանոնավոր ավտոմոբիլային ուղևորափոխադրումների իրականացման» /երկու լեզվով՝ հայերեն, ռուսերեն/,

3.2 Դիմերեսին՝ երկու լեզվով՝ /հայերեն, ռուսերեն/ տպագրական եղանակով կատարվում է հետևյալ գրառումները՝ 1.«Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև», 2.«Գործողության ժամկետ 2020», 3.«Նախատեսված է 1/մեկ/ փոխադրում իրականացնելու՝ նշանակման վայր և հակառակ ուղղությամբ», 4. «Միջազգային ավտոմոբիլային փոխադրման թույլտվության տեսակ՝ Երկկողմ և երրորդ երկրից, Տարանցիկ, Դեպի երրորդ երկիր», 5.«Այլ պետության փոխադրող /փոխադրողի անվանումը և հասցեն/ », 6.«Ավտոբուս, մակնիշը», 7.«Նշանակման վայրը», 8.«Ավտոբուսի հաշվառման համարանիշը», 9.«Ուղևորների քանակընշանակման վայր -------- հակառակ ուղղությամբ -------- », 10.«Հատուկ նշումներ», 11.«Տրման ամսաթիվը, ստորագրություն և կնիք»:

3.3 Դարձերեսին՝ երկու լեզվով՝ /հայերեն, ռուսերեն/ տպագրական եղանակով կատարվում է հետևյալ գրառումները՝ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ», «Սույն թույլտվությունը պետք է գտնվի տրանսպորտային միջոցում և ներկայացվի հսկողություն իրականացնելու իրավասություն ունեցող անձի պահանջի դեպքում: Այն սահմանված է միայն միջպետական ուղևորափոխադրումների համար և նախատեսված չէ ներպետական փոխադրումների համար: Սույն թույլտվությունը չի կարելի փոխանցել

երրորդ անձի: Փոխադրողը պարտավոր է պահպանել Հայաստանի Հանրապետությունում նորմատիվ իրավական, մասնավորապես՝ ավտոմոբիլային տրանսպորտի և ճանապարհային երթևեկության բնագավառի ակտերի պահանջները: Փոխադրումը սկսելուց առաջ պետք է լրացվեն սույն թույլտվության 5,6,7,8,9,11 կետերը»: Թույլտվության 5,6,7,8,9,11 կետերը չլրացնելու կամ սխալ լրացնելու դեպքում թույլտվությունը համարվում է անվավեր»:»

4. Միջպետական բեռնափոխադրումների մեկանգամյա թույլտվության բլանկի վրա տպագրական եղանակով կատարված տեքստերի ու տվյալների գրառումները պետք է լինեն սև գույնի:

5. Միջպետական բեռնափոխադրումների մեկանգամյա թույլտվության բլանկի վրա կենտրոնում տպագրական եղանակով դրոշմված ՀՀ զինանշան՝ արծաթագույն:

Ծառայության կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելու հաջորդ օրը	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացույցային օր հետո

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011018513
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՅԱՍՈՆ» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ձորաղբյուր, Սևանի 4
Արարատբանկ ԲԲԸ
Հ/Հ 1510002226470100
ՀՎՀՀ 02540338
տնօրեն Տ. Խուրշուդյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«25» 12 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/5Ծ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	79821200/560	Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանսի /ՏՆԵԿ/ թույլտվությունների բեռնափոխադրումների գրանցամատյանի տպագրության ծառայություն	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
3	79821200/561	Հայաստանի Հանրապետության միջպետական բեռնափոխադրումների մեկանգամյա թույլտվության փաստաթղթերի և ՌԴ ոչ կանոնավոր փոխադրումների իրականացման մեկանգամյա թույլտվության փաստաթղթի տպագրության ծառայություն	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

**** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011018513
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՅԱՍՈՆ» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ձորաղբյուր, Սևանի 4
Արարատբանկ ԲԲԸ
Հ/Հ 1510002226470100
ՀՎՀՀ 02540338
տնօրեն Տ. Խուրշուդյան

/ստորագրություն/
Կ.Տ